ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ՊՏՂՈՒՆՔ
Հ/Հ 900322235038
ՀՎՀՀ –04701766
ԻՆԴԵՔՍ 1145

ՀԵՌԱԽՈՍ 02316-35-50

РА АРМАВИРСКАЯ
ГУБЕРНЯ СЕЛО ПТГУНК
ИНДЕКС 1145
ТЕЛ.0231 6-35-50
RA THE MARZ OF ARMAVIR
VILAGE PTGHUNK
INDEX 1145

թիվ 01-135 03.10 2011թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարի 2011թ.-ի սեպտեմբեր ամսվա ընդունած որոշումները, արծակած կարգադրություն չունենք:

Պտղունք համայնքի ղեկավար /Ս.Զեյնալյան/

9287-11
04 10 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ

«26» Սեպտեմբերի 2011թ. թիվ 10

# 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N15-Ն հրամանի 12-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի մարզպետի 05.08.2011թվականի թիվ 01/07.1/2349-11 գրությունը.

Որոշում եմ՝

1.Հաստատել Արմավիրի մարզի Պտղունքի գյուղական համայնքի 2012 թվականի ատեստավորման ենթակա համայնքային ծառայողների ցուցակը համաձայն հավելվածի

2. Աշխատակազմի քարտուղարին (Կ.Արթենյանին) համայնքային ծառայողների ատեստավորման օրը և ժամը նշանակել համայնքի ղեկավարի այլ վարչական ակտով սահմանված կարգով և ժամկետում:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար /Ս.Զեյնալյան/

2011 թվականի սեպտեմբերի «26»

գ.Պտղունք

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Պտղունք
գյուղական համայնքի ղեկավարի
2011 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 10
որոշման

# ՊՏՂՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1.Արթենյան Կարապետ - Աշխատակազմի – 1.2-1
Արշավիրի – քարտուղար – ծածկագիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

«01» սեպտեմբերի 2011թ. թիվ 8

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված N1 հավելվածի 8-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնել ս/թ հոկտեմբերի 13-ին ժամը 14:00 - ին:

2.Մրցույթի անցկացման վերաբերյալ տալ հայտարարություն համաձայն հավելվածի:

3.Տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Հասմիկ Ներսիսյանին

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Պտղունք համայնքի ղեկավար /Ս.Զեյնալյան/

2011 թվականի սեպտեմբեր «01»
գ. Պտղունք

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Պտղունք
համայնքի ղեկավարի 2011 թվականի
սեպտեմբերի 1-ի թիվ 8 որոշման

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾ.3.2-1) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ (3.2-1):
1-ին կարգի մասնագետը՝ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է զորակոչի զորահավաքների իրականացման աշխատանքներին: Աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.
_միջնակարգ կրթություն
_սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ)ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2011 թվականի հոկտեմբերի 13-ին ժամը 14:00 Պտղունքի գյուղապետարանի շենքում:
Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
_դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
_տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմ, վկայականի, աշխատանքային գրքույկի (բացակայության դեպքում համապատասխան մարմնից ) պատճեները բնօրինակի հետ միասին

- արական սեռի զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի հետ միասին
- մեկ լուսանկար 3X4 չափսի
- անձնագրի պատճեն
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N310-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդությունների բացակայության մասին հայտարարություն:

Մրցույթին մասնակցել ցանկացողները փաստաթղթերը ներկայացնելու , լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Պտղունքի գյուղապետարան ևԱրմավիրի մարզպետարանի աշխատակազմի Տ-ի և ՀԳՄ հարցերով վարչություն(հասցե Աբովյան 71, հեռ.0237 2-76-49, 0237 2-07-70):
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00 –ից 16:00 բացի շաբաթ և կիրակի օրերից Պտղունքի գյուղապետարանում: Դիմումների ընդունման համար վերջին ժամկետն է՝ 28.09.2011թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«20» Սեպտեմբերի 2011թ. թիվ 9

## ՆՈՐ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի N2387-Ն որոշման՝ «Անշարժ գույքի հասցեավորման հիմնական կանոնները» 34-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի սեփականատեր՝ Արշադ Մոասեսի Նազարիմասիհիի 2011 թվականի սեպտեմբերի 20-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Պտղունք համայնքի 041-010 ծածկագրի Տերյան փողոցի թիվ 17 հասցեի և 041-011 ծածկագրի Տերյան փողոցի թիվ 19 հասցեի տնամերձ հողամասերը միավորել և տալ Տերյան փողոց թիվ 17-19 հասցեն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար /Ս.Զեյնալյան/

2011 թվականի սեպտեմբերի «20»
գ.Պտղունք